

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի

2009 թվականի գործունեության

հաշվետվություն

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (ԿՏԱԿ) 2009թ. գործունեությունն իրականացրել է ԿՏԱԿ-ի խորհրդի 2009թ. փետրվարի 3-ի ու հոկտեմբերի 30-ի նիստերում հաստատված «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի 2009թ. գործունեության ծրագրին», պետական աջակցության 29.01.2009թ. Ա-6/20 (ծրագիր 09.06.01.20) և 26.12.2009թ. ՊՖ-3 պայմանագրերին ու 16.10.2009թ. Ա-6/20-1 համաձայնագրին համապատասխան:

1. Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկում, ցանցային սարքավորումների նորացում, Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի շահագործում

1.1. Իրականացվել է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (ՀԴԻՑ) սպասարկման ու համակարգչային սարքավորումների պահպանման աշխատանքը.

- ՀՀ կրթության և գիտության (ՀՀ ԿԳ) նախարարի 20.02.2009թ. հ. 119-Ա/Ք հրամանի համաձայն կազմակերպվել է Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում ստեղծված 320 դպրոցներ ընդգրկող նոր ինտերնետային ցանցը ՀԴԻՑ-ին միացնելու աշխատանքը,
- ապահովվել է 644 դպրոցներ ընդգրկող ՀԴԻՑ-ի աշխատունակությունը, սպասարկվել են ցանցի կենտրոնական և հիսուն մարզային հանգույցները,
- կազմակերպվել են ցանցում տեղադրված համակարգիչների ծրագրային ապահովումը աշխատունակ վիճակում պահելու, ավտոմատ հակավիրուսային պաշտպանությունը և անցանկալի բովանդակության հնարավորինս սահմանափակումն իրագործելու խնդիրները,
- կազմակերպվել են ցանցի դպրոցներին իրական IP հասցեների և schools.am տիրույթում էլեկտրոնային փոստի տրամադրման, դպրոցական կայքերի տեխնիկական սպասարկման աշխատանքները,
- իրագործվել է ՀԴԻՑ-ի աշխատանքի ամենօրյա հսկողությունը, կազմակերպվել է ՀԴԻՑ-ի դպրոցների հետ օպերատիվ երկկողմանի աշխատանքային կապը, շահագործվել է ՀԴԻՑ-ի ընթացիկ աշխատանքային վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանը,

- իրականացվել են այցելություններ Հայաստանի մարզերում տեղաբաշխված և ՀԴԻՑ-ում ընդգրկված դպրոցներ՝ դպրոցական ինտերնետային ցանցի վիճակի գնահատման, խորհրդատվության և տեխնիկական աջակցության տրամադրման նպատակով,
- կազմվել են ցանցի աշխատանքի անհրաժեշտ հայտարարություններ, նամակ-հրահանգներ և այլ տեղեկատվական նյութեր՝ ԿՏԱԿ-ի կայքի ՀԴԻՑ էջում տեղադրելու համար,
- կատարվել է ՀԴԻՑ-ի վնասված և փոխարինման ենթակա սարքավորումների հաշվառումը՝ դրանք նորացնելու նպատակով, կազմակերպվել են անսարք և հնացած ցանցային սարքավորումները նորերով փոխարինելու աշխատանքները,
- նախապատրաստվել և հայտարարվել են ՀԴԻՑ-ի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման մրցույթներ, ստորագրվել են սարքավորումների մատակարարման պայմանագրերը,
- նախապատրաստվել և հայտարարվել է ՀԴԻՑ-ի 2010թ. սպասարկման մրցույթը, ստորագրվել է ՀԴԻՑ-ի 2010թ. սպասարկման պայմանագիրը:

1.2. Կազմակերպվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործման աշխատանքը.

- ապահովվել է ՇԻՀԿ-ի գործունեությունը. Հայաստանի ինը մարզերի 20 համայնքներում անցկացվել են դասընթացներ 572 աշակերտների և 182 ուսուցիչների համար,
- ընտրվել և սպասարկող կազմակերպության հետ համաձայնեցվել են ՇԻՀԿ-ի աշխատանքի համար ընտրված համայնք-դպրոցները,
- իրականացվել է ՇԻՀԿ-ի շահագործման ընթացքի պարբերական վերահսկումը,
- կազմվել են ՇԻՀԿ-ի աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ, նամակ-հրահանգներ և այլ տեղեկատվական նյութեր՝ ԿՏԱԿ-ի կայքի ՇԻՀԿ էջում տեղադրելու համար,
- նախապատրաստվել և հայտարարվել է ՇԻՀԿ-ի 2010թ. սպասարկման մրցույթը, ստորագրվել է ՇԻՀԿ-ի 2010թ. սպասարկման պայմանագիրը:

2. «Կրթական համալիր էջ» պորտալի շահագործում (պաշարների ու բովանդակային պարունակության համալրում, կրթական առցանց միջոցառումների կազմակերպում), ԿՏԱԿ-ի կայքի վարում

2.1. Իրականացվել է «Կրթական համալիր էջ» պորտալի (www.armedu.am) շահագործումը.

- ապահովվել է պորտալի «Տեղեկատվություն» բաժնի գործունեությունը, պարբերաբար թարմացվել և հարստացվել է ենթաբաժինների բովանդակությունը,
- լրացվել և հարստացվել է «Կրթական նյութեր» բաժնի էջերի բովանդակությունը. ստեղծվել են «Դիմորդ 2009» և «2009թ. միասնական, ավարտական և լրացուցիչ քննություններ», «2009թ. ընթացիկ գնահատում» տեղեկատվական էջերը, համապատասխան ենթաբաժիններում տեղադրվել են ուսումնական տարբեր առարկաների ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների էլեկտրոնային ժողովածուները, ավագ և հիմնական դպրոցների առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը, «Մաթեմատիկական մոդելներ» առցանց խորհրդաժողովի զեկուցումները, ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ալգորիթմական լեզուների ամբիոնում ստեղծված 14 էլեկտրոնային ուսումնական ձեռնարկները, հարստացվել են համացանցում գոյություն ունեցող կրթական պաշարների ու օգտակար հղումների էջերը,
- կազմակերպվել է «Ֆորումներ» և «Վիրտուալ համայնքներ» բաժինների աշխատանքը, «Հարցումներ և քվեարկություն» բաժնում առաջադրվել են կրթական ոլորտին առնչվող հարցեր և դրանց շուրջ կազմակերպվել քվեարկություններ,
- իրականացվել է ՀՀ ԿԳ նախարարության ստորաբաժանումներից ու տարբեր կրթական հաստատություններից ստացված տեղեկատվական նյութերի և կրթական փաստաթղթերի տեղադրումը պորտալի համապատասխան բաժիններում,
- գործարկվել է Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի «Մաթեմատիկայի ինտերնետային ամսագիր» առցանց պարբերականը «Հեռաուսուցում» բաժնում,
- կազմակերպվել է պորտալի անգլերեն բաժնի շահագործումը՝ «Տեղեկատվություն» բաժնում ստեղծվել և թարմացվել են «Նորություններ» և «Հայտարարություններ», «Կրթական կազմակերպություններ» էջերը, «Կրթական նյութեր» բաժնում տեղադրվել են տեղեկատվություն կրթական պաշարների մասին և օգտակար հղումներ, մշակվել և տեղադրվել են թեստեր, առաջադրվել են հարցումներ ու կազմակերպել քվեարկություններ «Վիրտուալ հանդիպում» բաժնում:

2.2. Նախապատրաստվել և հայտարարվել են առցանց մրցույթներ, վիկտորինաներ, օլիմպիադաներ ՀԴԻՑ-ի և «Կրթական համալիր էջ» պորտալի միջավայրում, մասնավորապես.

- «Դպրոցական ակնթարթ» թեմայով լուսանկարների մրցույթ ուսուցիչների և աշակերտների համար. ստեղծվել է մրցույթի պատկերասրահի ինտերնետային էջը,

- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրի ընդունման 20-ամյակին նվիրված վիկտորինա ուսուցիչների և աշակերտների համար, վիկտորինայի երկրորդ փուլի ռեֆերատների ժողովածուն տեղադրվել է «Պետություն և իրավունք (հասարակագիտություն)» էջում,
- Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի «Մաթեմատիկայի ինտերնետային ամսագրի» մաթեմատիկայի օլիմպիադան:

Ամփոփվել և հայտարարվել են մրցույթների արդյունքները, կազմակերպվել հաղթողներին ու մասնակիցներին մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունները:

2.3. Իրականացվել է ԿՏԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքի (www.ktak.am) և ԿՏԱԿ-ի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ու կառավարման համակարգի շահագործումը:

3. ՀԴԻՑ-ում նոր ընդգրկված 320 դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչների և դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների վերապատրաստում

3.1. Իրականացվել են ՀԴԻՑ-ում նոր ընդգրկված 320 դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների վերապատրաստումները:

3.2. Իրականացվել են ՀԴԻՑ-ում նոր ընդգրկված 320 դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչների վերապատրաստումները:

4. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման վերաբերյալ ուսումնաօժանդակ ձեռնարկի ու կից էլեկտրոնային նյութի ստեղծում, հրատարակում և անվճար տարածում դպրոցներում

4.1. Իրականացվել են «Համացանցի օգտագործման ուղեցույց» ուսումնաօժանդակ ձեռնարկի և կից էլեկտրոնային նյութի (լազերային սկավառակի) ստեղծման, հրատարակման աշխատանքները՝ ձեռնարկի երկուական օրինակներ և մեկ սկավառակ Հայաստանի բոլոր դպրոցներին հանձնելու նպատակով:

5. Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն, տեղեկագրի կազմում և նախապատրաստում հրատարակման

5.1. Իրականացվել են դպրոցներում տեղադրված համակարգչային սարքավորումների ընթացիկ հաշվառման, ստացված արդյունքների վերլուծության, համակարգման ու «Դպրոցների համակարգչային սարքավորումների տվյալների շտեմարանում» դրանց գրանցման աշխատանքները, կազմվել են դպրոցները համակարգչային սարքավորումներով հետագա համալրման առաջարկներ:

5.2. Իրականացվել են աշխատանքներ Հանրակրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործունեության և զարգացման ուղղությամբ.

- Ամփոփվել են 2008-2009 ուսումնական տարվա ձև թիվ-1 հանրակրթություն (տարեկան) «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության տվյալները, որոնք ներկայացրել են Հայաստանի 1475 հանրակրթական ուսումնական հաստատությունները: Արդյունքները ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարությանը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը (ԱՎԾ): Պարբերաբար, ըստ պահանջի, ՀՀ ԿԳ նախարարություն, ԱՎԾ, «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ է ներկայացվել տարբեր վիճակագրական տվյալներ պարունակող տեղեկատվություն:
- Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2008-2009 ուսումնական տարվա ամփոփ վիճակագրական տվյալների հիման վրա նախապատրաստվել, հրատարակվել և ՀՀ ԿԳ նախարարության ստորաբաժանումներին, մարզպետարանների և երևանի քաղաքապետարանի կրթության վարչություններին, Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատություններին է բաշխվել «Հանրակրթությունը Հայաստանում» տարեկան վիճակագրական տեղեկագիրը, որը պարունակում է 2008-2009 ուսումնական տարվա ՀՀ հանրակրթության հիմնական ցուցանիշները բնութագրող 48 աղյուսակներ, դիագրամներ և վիճակագրական վերլուծություն:
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով պայմանավորված կատարվել են փոփոխություններ Հանրակրթության կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային փաթեթում: Նախապատրաստվել, տպագրվել և Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատություններին է բաշխվել 2009-2010 ուսումնական տարվա «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» ձև թիվ-1 հանրակրթություն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվային ձևը: Կազմակերպվել է հաշվետվային տվյալների հավաքագրման, մուտքագրման և շտեմարանում դասակարգման գործընթացը:
- Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ (հարցումներ, կարծիքների վերլուծություններ) մասնագիտական կրթության

տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ: Համակարգվել է ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծված Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի աշխատանքային խմբի գործունեությունը:

6. Կրթական համակարգում օգտագործվող «Մայքրոսոֆթ» ընկերության համակարգչային ծրագրերի արտոնագրերի բաշխման գործընթացի կազմակերպում (աշխատանքներն իրականացվել են ՀՀ ԿԳՆ և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված «Դպրոցական պայմանագրի» (Microsoft Campus and School Agreement) շրջանակներում)

6.1. Կազմակերպվել է ծրագրային համակարգերի արտոնագրերի փաթեթների (8300-ական Windows Vista և Microsoft Office) հանձնումը կրթական հաստատություններին, կատարվել են տեղադրման հետ կապված խորհրդատվական աշխատանքներ, կնքվել են հանձնման-ընդունման արձանագրություններ:

6.2. Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ՝ ի կատարումն ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 24-ի հ 1478-Ա որոշման կնքվել է «Մայքրոսոֆթ» ընկերության ծրագրային համակարգերի արտոնագրերի մատակարարման պայմանագիր «Սի Այ Թի» ընկերության հետ:

7. Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում

7.1. Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) բնագավառի տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով ԿՏԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են ՏՀՏ ոլորտին առնչվող միջոցառումներին, մասնավորապես՝

- ՀՀ վարչապետին կից Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի բոլոր մասնախմբերի աշխատանքներին,
- «Մեդիա կենտրոնի» և «Մայքրոսոֆթ» ընկերության կազմակերպած «Ապահով ինտերնետի միջազգային օրվան» նվիրված միջոցառումներին՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ու Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցում և ամփոփիչ կլոր սեղանին՝ «Մարիոթ Արմենիա» հյուրանոցում,

- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում կազմակերպված «Թվային տեխնիկական միջոցները որպես արդյունավետ կրթական գործիքներ» հանրապետական ստուգատեսին և ներկայացրել զեկուցում,
- Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի և «Մայքրոսոֆթ» ընկերության կազմակերպած «Իմ հայրենի եզերքը» խորագրով շնորհանդեսների ցուցադրությանը և մրցանակաբաշխությանը,
- Վիեննայի «Նորարար ուսուցիչների համաժողով 2009» միջոցառմանը,
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի "DvInfo" վիճակագրական աշխատանքների իրականացման համակարգի դասընթացին,
- «DigiTec Business Forum 2009» շրջանակներում կազմակերպված միջոցառումներին,
- Համաշխարհային բանկի «Financial Crisis and Cloud Computing» տեսասեմինարին,
- «Մայքրոսոֆթ» ընկերության «Գործընկերներ ուսման ոլորտում» (Partners in Learning, PiL) ծրագրի շրջանակներում կազմակերպված «Տեխնոլոգիաների և նորարար մեթոդների օգտագործումը հանրակրթության համակարգում» համաժողովին և ներկայացրել երեք զեկուցումներ,
- Դիլիջանում և Աղվերանում կազմակերպված «ՏՀՏ լիդերների առանց փողկապի հանդիպում» համաժողովներին և ներկայացրել «Հայաստանի հանրակրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի մասին» թեմայով զեկուցում,
- Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում «ՏՀՏ-ն կրթության ոլորտում» եռօրյա միջազգային համաժողովին,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած «Կրթություն – զարգացում համագործակցությամբ» երկօրյա խորհրդաժողովին, ներկայացրել «ՏՀՏ կիրառությունը կրթության ոլորտում. իրականացվող ծրագրեր, առաջնահերթ խնդիրներ, համագործակցության առաջարկներ» թեմայով երկու զեկուցումներ,
- Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային առաջին ծրագրի ամփոփմանն ու երկրորդ ծրագրի մեկնարկին նվիրված երկօրյա համաժողովին, և ներկայացրել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի գործունեությունը» թեմայով զեկուցում,
- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (CAPS) ծրագրի «Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների մրցունակության» երրորդ ամենամյա համաժողովին և ներկայացրել «ՏՀՏ ներդրումը դպրոցում» թեմայով զեկուցում,
- զերմանական InWent միջազգային կարողությունների կառուցման կազմակերպության «Ինստիտուցիոնալ կառուցում և մարդկային ռեսուրսների զարգացում էլեկտրոնային ուսուցման (e-Learning) ոլորտում» ծրագիր

դասընթացին (ՏՀՏ բովանդակության բաժնի մասնագետը ստացել է վկայագիր՝ ծրագրի բոլոր բաղադրիչների ուղղությամբ ձեռքբերած գիտելիքների համար),

- Հայկական վիրտուալ համալսարանի (Armenian virtual college) ստեղծողների և շահագործողների հետ հանդիպում-քննարկմանը,
- «Այբ» կրթական հիմնադրամի կազմակերպած «Հայկական դպրոց» թեմայով կլոր սեղանին,
- Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կազմակերպած «Ռոբոտատեխնիկայի զարգացումը կրթական հաստատություններում» թեմայով հանդիպում-քննարկմանը,
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կազմակերպած «Սուվեր» դպրոցական ֆիլմերի և լուսանկարների հանրապետական փառատոնի ամփոփիչ միջոցառմանը և կրթահամալիրում իրականացվող մանկավարժական ծրագրերի ամենամյա 4-րդ բաց փորձաքննությանը:

7.2. Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգման նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, քննարկումներ, իրականացվել համատեղ աշխատանքներ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ, մասնավորապես՝

- «Մայքրոսոֆթ» ընկերության խնդրանքով ուսումնասիրվել են «Գործընկերներ ուսման ոլորտում» (Partners in Learning, PiL) ծրագրի «Նորարար դպրոցներ» բաղադրիչի միջազգային մրցույթի հայաստանյան փուլին ներկայացված շուրջ 20 դպրոցների հայտերը, մրցույթի կազմակերպիչներին տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն,
- աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԿԳՆ և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված «Գործընկերներ ուսման ոլորտում» փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում «Տեխնոլոգիաների և նորարար մեթոդների օգտագործումը հանրակրթության համակարգում» համաժողովի, «Նորարար ուսուցիչների հայաստանյան առաջին ֆորումի» և «Վիրտուալ շրջայց դասասենյակից» մրցույթի կազմակերպման աշխատանքներին,
- ՀՀ ԿԳ նախարարի հանձնարարությամբ ուսումնասիրվել է Տ.Սարգսյանի «Տիգրան Մեծ» համակարգչային խաղին վերաբերվող առաջարկը, հեղինակին տրամադրվել է խորհրդատվություն,
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հրավերով ՏՀՏ բովանդակության բաժնի մասնագետն ընդգրկվել և մասնակցել է կրթահամալիրում իրականացվող մանկավարժական ծրագրերի ամենամյա 4-րդ բաց փորձաքննությանը,
- Լոռու և Շիրակի մարզային համակարգողներն աջակցել են Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի աշխատակիցներին՝ նշված մարզերի անցվերեն դասավանդող ուսուցիչների համար անցկացված միջոցառումների կազմակերպական աշխատանքներին,

- ուսումնասիրվել են Հայաստանի հանրակրթական դպրոցների 7-9-րդ դասարանների համար «Քվանտ» վարժարանի մշակած Անգլերեն և Ռուսաց լեզու առարկաների էլեկտրոնային ձեռնարկների նախնական տարբերակները և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ներկայացվել է մասնագիտական կարծիք,
- քննարկվել են հեռավար ուսուցման, ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման ու փաստաթղթաշրջանառության համակարգերի մշակման ու ներդրման աշխատանքներին առնչվող հարցերը («Նորք» տեղեկատվական վերլուծական կենտրոն, «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» կազմակերպություն, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ, «Ալգորիթմ Սերվիս» և «Մեր Սոֆթ» ընկերություններ, «Քվանտ» վարժարան և այլն):

7.3. ԿՏԱԿ-ի տնօրենը մասնակցել է.

- ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի նախաձեռնությամբ անցկացվող «Լավագույն հայկական կրթօջախ» համահայկական ամենամյա մրցույթի հանձնաժողովի աշխատանքներին,
- ՀՀ Նախագահի մոտ 2009թ. հունիսի 19-ին կայացած խորհրդակցության ՀՆԱ-5 արձանագրության 2-րդ կետի հանձնարարականը (Հայաստանի ազգային և Խնկո-Ապոր անվան գրադարանների տեխնիկական արդիականացման ծրագրի մշակում) կատարելու նպատակով ՀՀ մշակույթի նախարարությունում ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքներին:

7.4. Կազմակերպվել են ՀՀ ԿԳ նախարարի 24.08.2009թ. հ.756-Ա/Ք հրամանով ստեղծված Համակարգչային գրագիտության ուսուցման և ծրագրի նախագծի փորձնական փուլի կատարումն ու «ՏՀՏ-ն դպրոցում» ծրագրի ուսումնասիրությունն ապահովող աշխատանքային խմբի աշխատանքները.

- գումարվել են նիստեր,
- կազմակերպվել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի ստեղծած «Ուսում 1» համակարգի փորձաքննությունը ԿՏԱԿ-ում, Կրթության ազգային ինստիտուտում և «Քվանտ» վարժարանում, կազմվել և ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթության վարչություն է ներկայացվել «Ուսում» համակարգի փորձնական ներդրման համար ընտրված դպրոցների ցուցակը, կազմակերպվել է համակարգի տեղադրումը փորձնական ներդրման համար ընտրված դպրոցներում, կատարվել են հարցումներ ներդրման ընթացքի մասին,
- «Միկրոաշխարհներ ԼՈԳՈ» (“Microworlds LOGO”) էլեկտրոնային ուսուցողական միջավայրի կիրառման արդյունավետությունը և դպրոցական

ծրագրում այն ընդգրկելու անհրաժեշտությունն ուսումնասիրելու նպատակով մշակվել է հարցաթերթիկ, կատարվել են հարցումներ այդ միջավայրում աշխատանքի փորձ ունեցող դպրոցներում, ամփոփվել են հարցումների արդյունքները, փորձնական ներդրման համար ընտրված դպրոցների ուսուցիչների համար «Քվանտ» վարժարանում կազմակերպվել են կարճատև դասընթացներ և ավարտական աշխատանքների ցուցադրություններ, կատարվել և ամփոփվել են լրացուցիչ հարցումներ,

- ՀՀ ԿԳ նախարարին առաջարկ է ներկայացվել ՀՀ կառավարության 2010թ. գործունեության ծրագրի նախագծում «Հայաստանի հանրակրթության ոլորտում համակարգչային գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդգրկելու վերաբերյալ:

7.5. ՀՀ ԿԳ նախարարի հանձնարարությամբ մշակվել և ներկայացվել են ՏՀՏ բնագավառին վերաբերվող ծրագրային փաստաթղթեր, մասնավորապես՝

- «Համակարգիչներ բոլորի համար» նախագծի իրականացման ծրագիրը,
- «Տեղեկանք էստոնիայի «Վագրի ցատկ» նախագծի օրինակով Հայաստանի հանրակրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացման վերաբերյալ» (փաստաթուղթը տեղադրված է ԿՏԱԿ-ի ինտերնետային կայքում):

7.6. Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի իրականացմանն ուղղությամբ՝ դպրոցները համակարգիչներով ապահովելու և համակարգչային ուսումնական կենտրոններ ստեղծելու նպատակով (700 համակարգիչների 148 մվիրաբերության պայմանագրեր):

8. Դրամաշնորհային աշխատանքների իրականացում

8.1. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) «Էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների բազմացման աշխատանքներ՝ Հայաստանի բոլոր դպրոցները դրանցով ապահովելու նպատակով» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում բազմացվել են Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ալգորիթմական լեզուների ամբիոնում ստեղծված և ԿՏԱԿ-ում լրամշակված 14 էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների շուրջ 10632 լազերային սկավառակներ, Հայաստանի 673 դպրոցներին հանձնվել են բոլոր 14 ձեռնարկները, իսկ 126 դպրոցներում լրացվել են պակասող ձեռնարկները,

Հայաստանի բոլոր դպրոցներում ավարտվել են էլեկտրոնային գրադարանների հիմնման աշխատանքները,

8.1. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձևավորված աշխատանքային խումբը մշակել և պատվիրատուին է ներկայացրել «Նախադպրոցական կրթության տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքը»: Աշխատանքային խումբը տեղեկատվական համակարգի ստեղծմանն առնչվող հարցերը քննարկելու նպատակով Տավուշի (ք. Իջևան), Սյունիքի (ք. Գորիս և ք. Կապան) և Լոռու (ք. Վանաձոր) մարզերում մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների աշխատակիցների, մարզերի նախադպրոցական հաստատությունների տնօրենների և գլխավոր հաշվապահների մասնակցությամբ կազմակերպել է սեմինար-խորհրդակցություններ: Կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 7, Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 279 և «Սեբաստիա», Արարատի մարզի Փոքր Վեդու «Ձարթոնք», ք. Մասիսի թիվ 4 նախադպրոցական հաստատություններում:

9. Ստեղծվել և գործարկվել են՝

- ԿՏԱԿ-ի անխափան էլեկտրամատակարարման ինքնաշխատ համակարգը՝ էլեկտրասնուցման երկրորդ՝ պահեստային գծով,
- սերվերային և հարակից տարածքների հակահրդեհային և հակաառևանգման ահազանգման համակարգը,
- սերվերային սենյակի ջերմաստիճանի կարգավորման համակարգը:

10. Պարբերաբար գումարվել են ԿՏԱԿ-ի խորհրդի նիստերը, որոնց ընթացքում քննարկվել ու հաստատվել են կազմակերպության գործունեությանն առնչվող կարևոր փաստաթղթերը՝ աշխատանքային ծրագիրը, նախահաշիվը, կառուցվածքային փոփոխությունները, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և այլն: